ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

6-7/2011 թ. (166-167)

СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ

ИЗВЕСТИЯ

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

BULLETIN

PROCEEDINGS OF

BUILDERS UNION OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2011

Հայաստանի շինարարների միության տեղեկագիր

Известия Союза Строителей Армении

Bulletin Builders of Armenia

Խմբագրական կազմ

Յուրի Սաֆարյան (գլխ. խմբագիր) ճարտ. դոկտոր, Գագիկ Գալստյան (ՀՇՄ նախագահ) տեխն. գիտ. թեկնածու, Մկրտիչ Մինասյան (ՀՃՄ նախագահ), Գուրգեն Մինասյան (պատասխանատու քարտուղար), Պարգև Բալջյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Արեստ Բեգլարյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Սարգիս Թովմասյան՝ ճարտ. թեկնածու, Վլադիմիր Համբարձումյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Աշոտ Մարկոսյան՝ տնտեսագիտության դոկտոր:

Редакционный совет

Юрий Сафарян (главный редактор), доктор архитектуры, Гагик Галстян (председатель ССА), канд. техн. наук, Мкртич Минасян (председатель САА), Гурген Минасян (ответственный секретарь), Паргев Балджян доктор техн. наук, Арест Бегларян доктор техн. наук, Саргис Товмасян канд. архитектуры, Владимир Амбарцумян доктор техн. наук, Ашот Маркосян доктор эконом. наук.

Editorial council

Yuri Safaryan (editor-in-chief) doctor of architecture, Gagik Galstyan (president of Builders Union of Armenia) candidate of technical science, Mkrtich Minasyan (president of Architectures Union of Armenia), Gurgen Minasyan (executive secretary), Pargev Baldjyan doctor of technical science, Arest Beglaryan doctor of technical science, Sargis Tovmasyan candidate of architecture, Vladimir Hambardzumyan doctor of technical science, Ashot Marcosyan doctor of economic science.

Տեղեկագիրը երաշխավորված է տպագրության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2011 թվականի N 234-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 788-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 788-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննումը շինարարական գործունեության այն տեսակն է, որն ապահովում է օբյեկտների շինարարության, շինանյութերի, ջրամատակարարման աղբյուրների տարածքների (շրջանի, տեղամասի, շինհրապարակի, ուղեգծի) բնական և տեխնածին պայմանների համալիր ուսումնասիրությունները, շրջակա միջավայրի հետ տվյալ օբյեկտների փոխազդեցության կանխատեսման կազմումը, դրանց ինժեներական պաշտպանվածության և բնակչության կյանքի անվտանգ պայմանների հիմնավորումը: Շինարարության համար կատարված ինժեներական հետազննումների նյութերի հիման վրա իրականացվում է շենքերի և շինությունների շինարարության, այդ թվում՝ ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, օբյեկտների շահագործման և լուծարման մինչնախագծային, նախագծային և աշխատանքային փաստագրերի, ինչպես նաև տնտեսական, տեխնիկական, սոցիալական և էկոլոգիական տեսակետից նպատակահարմար հիմնավորված նախագծային լուծումների հանձնարարականների մշակում:».

2) կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հայտատուի կողմից ներկայացված համապատասխան բարձրագույն կրթություն և ինժեներական հետազննման մասնագիտական որակավորում կամ վերջին հինգ տարվա ընթացքում ինժեներական հետազննման գործունեության առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող՝ ըստ հետևյալ մասնագիտությունների, առնվազն մեկ մասնագետի առկայություն՝

ա. երկրաբանություն կամ երկրաբանություն, օգտակար հանածոների հետախուզում և մշակում, կամ հողաբարելավում և հողային կադաստր, կամ հողաշինարարություն և հողային կադաստր,

բ. հիդրոինժեների կամ ջրօգտագործում և կոյուղի, կամ ջրային համակարգերի շինարարություն և շահագործում, կամ հիդրոտեխնիկ կամ ջրօդերևութաբանություն,

գ. գեոդեզիա կամ գեոդեզիա և հողաբարելավում կամ տեխնիկ գեոդեզիստ:».

3) կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետում «լաբորատորիայով» բառը փոխարինել «հողային շերտերի, ապարների կարծրության տեսակը որոշող լաբորատոր» բառերով.

4) կարգի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) որակավորված մասնագետների փոփոխության դեպքում լիցենզավորված անձը 10-օրյա ժամկետում տեղյակ է պահում լիցենզավորող մարմնին:».

5) կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ե» և 2-րդ ենթակետի «գ» պարբերություններում «և այլն» բառերը համապատասխանաբար փոխարինել «և աշխատանքային պայմանագիր» բառերով.

6) ուժը կորցրած ճանաչել կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերությունները.

7) կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունից հանել «հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը և» բառերը.

8) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին կետով.

«6.1. Լիցենզիաներն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով.».

9) ուժը կորցրած ճանաչել կարգի N 1 ձևի 1-ին, 3-րդ և N 2 ձևի 3-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ S. Սարգսյան

2011թ. Մարտի 22
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2011 թվականի N 256-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 855-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասնագետների մասնագիտական որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 855-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քաղաքաշինության բնագավառում մասնագետները որակավորվում են ըստ հետևյալ բնագավառների՝

1) շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)՝ ըստ հետևյալ մասնագիտությունների՝

ա. արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն կամ շինարարություն, շինարարական շինվածքների և կոնստրուկցիաների արտադրություն կամ շինարարություն և ճարտարապետություն,

բ. փոխադրումների կազմակերպում ու կառավարում կամ տրանսպորտային ուղիների, միջոցների, շինարարություն, կառավարում և դրանց շահագործում կամ թունելներ և կամուրջներ կամ ավտոճանապարհներ, երկաթուղային տրանսպորտի շահագործում, երկաթուղային ուղիների շահագործում,

գ. ատոմային էլեկտրական կայաններ և սարքավորումներ կամ էլեկտրաէներգետիկա կամ էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ կամ էլեկտրակայաններ կամ ջերմային էլեկտրակայանների շինարարություն կամ ինժեներ էներգետիկ կամ տեխնիկ էլեկտրիկ,

դ. քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում կամ ջերմագազամատակարարում և օդափոխություն կամ ջերմային կայաններ կամ գազային տնտեսություն կամ արդյունաբերական ջերմաէներգետիկա,

ե. հիդրոհնձեների կամ ջրօգտագործում և կոյուղի կամ ջրային համակարգերի շինարարություն և շահագործում կամ հիդրոկայաններ և ջրամբարներ,

զ. ռադիոֆիզիկա կամ ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա կամ կիսահաղորդիչների ֆիզիկա և էլեկտրոնիկա կամ հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում կամ էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկա և կապ կամ ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա կամ ռադիոկապ.

2) ինժեներական հետազննում՝ ըստ հետևյալ մասնագիտությունների՝

ա. երկրաբանություն կամ երկրաբանություն, օգտակար հանածոների հետախուզում և մշակում կամ հողաբարելավում և հողային կադաստր կամ հողաշինարարություն և հողային կադաստր,

բ. հիդրոհնձեների կամ ջրօգտագործում և կոյուղի կամ ջրային համակարգերի շինարարություն և շահագործում կամ հիդրոտեխնիկ կամ ջրաօդերևութաբանություն,

գ. գեոդեզիա կամ գեոդեզիա և հողաբարելավում կամ տեխնիկ գեոդեզիստ.

3) շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ ըստ հետևյալ մասնագիտությունների՝

ա. փորձագետ կոնստրուկտոր,

բ. երկրաբան կամ հիդրոերկրաբան,

գ. տնտեսագետ-շինարար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. մարտի 23
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2011 թվականի N 404-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 774-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 774-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունը կատարվում է վնասվածքների և վթարների առաջացման պատճառների պարզաբանման, վերակառուցման հնարավորության, ինչպես նաև դրանց առանձին տարրերի ու ընդհանուր կրողունակության և կոշտության հուսալիության գնահատման նպատակով:»,

բ. 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) լիցենզավորված անձը որակավորված մասնագետների փոփոխության դեպքում 10-օրյա ժամկետում տեղյակ է պահում լիցենզավորող մարմնին:»,

գ. ուժը կորցրած ճանաչել 10-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերությունները,

դ. 10-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունից հանել «հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը և» բառերը,

ե. 10-րդ կետի 1-ին ենթակետի «ե» և 2-րդ ենթակետի «զ» պարբերություններում «և այլն» բառերը փոխարինել «և աշխատանքային պայմանագիր» բառերով,

զ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. Լիցենզիաներն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային

համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:»,

է. ուժը կորցրած ճանաչել N 1 ձևի 1-ին, 3-րդ և N 2 ձևի 3-րդ կետերը.

2) որոշման N 2 հավելվածից հանել «գործունեության տեսակը» տողը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. ապրիլի 21
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2011 թվականի N 436-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 777-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 777-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի ներդիրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի».

3) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի.

5) որոշման N 2 հավելվածում՝

ա. «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. հավելվածից հանել «գործունեության տեսակը» տողը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ S. Սարգսյան

2011 թ. ապրիլի 27
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 436-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 2-ի N 777-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) և լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական ու ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված անձինք քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա ստանալու նպատակով կարող են դիմել ինչպես սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր ոլորտների, այնպես էլ դրանցից մի քանիսի կամ յուրաքանչյուրի համար: Լիցենզիան տրամադրելիս՝ լիցենզիայի ներդիրում կատարվում է նշում հայցվող ոլորտի կամ ոլորտների վերաբերյալ:

3. Շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման և լիցենզիային կից՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված համապատասխան ոլորտի (ոլորտների) ներդիրի (ներդիրների)

տրամադրման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

4. Շինարարության իրականացման գործունեության լիցենզիան և լիցենզիային կից ներդիրը (ներդիրները) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):

5. Անձը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության իրականացման գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

6. Լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

7. Ֆիզիկական անձի մասնագիտական ունակությունների փաստը հաստատվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ մասնագիտության գծով բարձրագույն կրթությամբ կամ շինարարության իրականացման գործունեության համապատասխան ոլորտում առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժով:

8. Շինարարության իրականացման գործունեության լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտներից որևէ մեկում կամ ոլորտներում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հայտատուն լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 1 ձևի, նշելով իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. տվյալներ կազմակերպությունում ներգրավված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի (բացառությամբ էներգետիկ ոլորտի) մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը), էներգետիկ ոլորտի դեպքում՝ տվյալներ առնվազն երկու տարբեր մասնագետի մասին,

գ. կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

դ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2) ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի, նշելով անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. անձնագրի պատճենը,

գ. տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի (բացառությամբ էներգետիկ ոլորտի) մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը), էներգետիկ ոլորտի դեպքում՝ տվյալներ առնվազն երկու տարբեր մասնագետի մասին,

դ. անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

ե. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Լիցենզիաներն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային

համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

11. Լիցենզավորող մարմինը լիցենզիա տալու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծում է լիցենզավորող հանձնաժողով, որի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է լիցենզավորող մարմինը:

12. Լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիա տալու մասին հայտը քննարկում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

13. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և օրենքով սահմանված կարգով:

14. Լիցենզիա ստանալու մասին հայտը լիցենզավորող մարմնի կողմից բավարարվելու դեպքում լիցենզավորող մարմինը հայտատուին տրամադրում է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր (ներդիրներ)՝ լիցենզիայի հայտին կից ներկայացված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտի (ոլորտների) աշխատանքը (աշխատանքները) իրականացնող պատասխանատու անձանց մասով: Լիցենզավորված անձն իրավունք ունի գործունեություն իրականացնելու միայն լիցենզիային կից տրամադրված ներդիրում (ներդիրներում) նշված ոլորտում (ոլորտներում):

15. Լիցենզիան վերաձևակերպվում է, և լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԵՐԴԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Մասնագետների փոփոխության դեպքում՝ լիցենզավորված անձը, մինչև այդ փոփոխությունները կատարելը, լիցենզավորող մարմին է ներկայացնում լիցենզիային կից

տրամադրված ներդիրի փոփոխության մասին հայտ՝ համաձայն N 5 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

17. Շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա ստացած անձինք լիցենզիային կից՝ նախկինում ստացած ներդիրով (ներդիրներով), տվյալ բնագավառում իրականացվող գործունեությունից բացի, սույն կարգի 6-րդ կետով սահմանված այլ ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար լիցենզավորող մարմին են ներկայացնում համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքը (աշխատանքները) իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ) ստանալու մասին հայտ՝ համաձայն N 6 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

18. Լիցենզավորող մարմինը սույն կարգի 16-րդ կամ 17-րդ կետի համաձայն ստացած հայտը և կից փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է տրամադրում սույն կարգի 6-րդ կետով սահմանված աշխատանքն իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ), եթե ներկայացված հայտը և կից փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին ու պահանջներին:

19. Սույն կարգի 16-րդ կամ 17-րդ կետի համաձայն ներկայացված հայտը մերժվում է, եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կարգով սահմանված պայմաններին և պահանջներին:

20. Սույն կարգով սահմանված ներդիրի տրամադրման կամ ներդիրի ստացման մասին հայտը մերժվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող

պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում ներգրավված մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին.

2) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը.

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող

պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

Հայտին կցվում են՝

1) անձնագրի պատճենը.

2) տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատող մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին.

3) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

4) անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը.

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N3

ՏՎՅԱԼՆԵՐ

_____

(կազմակերպության անվանումը)

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈԼՈՐՏԻ (ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

NN ը/կ	Աշխատողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը	Կրթությունը	Մասնագիտությունը	Ոլորտը (ոլորտները)
1	2	3	4	5

_____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N4

_____

(կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

_____

(լիցենզավորվող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

ՑԱՆԿ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Կատարման ժամկետը	Վավերացումը (պայմանագրի, ակտի համարները)
1	2	3	4

_____

(կա

_____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____

_____ 20 թ.

Ձև N5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐԴԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոփոխել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիային կից տրամադրված N _____

ներդիրը:

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում (անհատ ձեռնարկատիրոջ մոտ) ներգրավված և ներգրավվող մասնագետի (մասնագետների) մասին.

2) անձի կամ մասնագետի (մասնագետների) դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) անձի կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը:

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի նոր ներդիր՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող

պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

Հայտին կցվում են՝

1) անձի հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատող մասնագետի (մասնագետների) և ոլորտի (ոլորտների) մասին.

2) անձի հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատող մասնագետի (մասնագետների) դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը:

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 436-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 2-ի N 777-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

_____
(լիցենզիայի և ներդիրի համարները)

_____
(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

_____
(գործունեության ոլորտը)

_____
(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

_____

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.
Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2011 թվականի N 468-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 775-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 775-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզավորման կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված՝ քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզիայի ձևում՝

ա. «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. «գործունեության տեսակը» տողը հանել:

2. Հաստատել քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզիայի ներդիրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. մայիսի 2

Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2011 թվականի

ապրիլի 7-ի N 468-Ն որոշման

«Հավելված N 1

ՀՀ կառավարության 2009 թվականի

հուլիսի 2-ի N 775-Ն որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) և լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական ու ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված անձինք շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա ստանալու նպատակով կարող են դիմել ինչպես սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր ոլորտների, այնպես էլ՝ դրանցից մի քանիսի կամ յուրաքանչյուրի համար: Լիցենզիան տրամադրելիս՝ լիցենզիայի ներդիրում կատարվում է նշում հայցվող ոլորտի կամ ոլորտների վերաբերյալ:

3. Շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման և լիցենզիային կից՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված համապատասխան ոլորտի (ոլորտների) ներդիրի (ներդիրների) տրամադրման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

4. Շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիային կից ներդիրը (ներդիրները) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):

5. Անձը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

6. Լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

7. Ֆիզիկական անձի մասնագիտական որակավորում ունենալու փաստը հաստատվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ մասնագիտության գծով բարձրագույն կրթությամբ կամ շինարարության որակի տեխնիկական հսկողության համապատասխան մասնագիտական որակավորման կամ համապատասխան ոլորտում շինարարության կամ շինարարության որակի

տեխնիկական հսկողության գործունեության առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժով:

8. Շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության իրականացման լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտներից որևէ մեկում կամ ոլորտներում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

9. Շինարարություն իրականացնող կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել իրենց կողմից իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքներ կամ՝ ներգրավվել դրանցում:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Հայտատուն լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 1 ձևի, նշելով իրավաբանական անձի անվանումն ու կազմակերպաիրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. տվյալներ կազմակերպությունում ներգրավված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի (բացառությամբ էներգետիկ ոլորտի) մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը, էներգետիկ ոլորտի դեպքում՝ տվյալներ առնվազն երկու տարբեր մասնագետի մասին,

գ. կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

դ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2) ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի, նշելով անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. անձնագրի պատճենը,

գ. տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի (բացառությամբ էներգետիկ ոլորտի) մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը, էներգետիկ ոլորտի դեպքում՝ տվյալներ առնվազն երկու տարբեր մասնագետի մասին,

դ. անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

ե. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

11. Լիցենզիաներն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Լիցենզավորող մարմինը լիցենզիա տալու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծում է լիցենզավորող հանձնաժողով, որի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է լիցենզավորող մարմինը:

13. Լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիա տալու մասին հայտը քննարկում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

14. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և օրենքով սահմանված կարգով:

15. Լիցենզիա ստանալու մասին հայտը լիցենզավորող մարմնի կողմից բավարարվելու դեպքում՝ լիցենզավորող մարմինը հայտատուին տրամադրում է շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր (ներդիրներ)՝ լիցենզիայի հայտին կից ներկայացված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտի (ոլորտների) աշխատանքը (աշխատանքները) իրականացնող պատասխանատու անձանց մասով: Լիցենզավորված անձն իրավունք ունի գործունեություն իրականացնելու միայն լիցենզիային կից տրամադրված ներդիրում (ներդիրներում) նշված ոլորտում (ոլորտներում):

16. Լիցենզիան վերաձևակերպվում է, և լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԵՐԴԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Որակավորված մասնագետների փոփոխության դեպքում՝ լիցենզավորված անձը մինչև այդ փոփոխությունների կատարումը լիցենզավորող մարմին է ներկայացնում լիցենզիային կից

տրամադրված ներդիրի փոփոխության մասին հայտ՝ համաձայն N 5 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

18. Շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա ստացած անձինք լիցենզիային կից՝ նախկինում ստացած ներդիրով (ներդիրներով), տվյալ բնագավառում գործունեությունից բացի, սույն կարգի 6-րդ կետով սահմանված այլ ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար լիցենզավորող մարմին են ներկայացնում համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքը (աշխատանքները) իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ) ստանալու մասին հայտ՝ համաձայն N 6 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

19. Լիցենզավորող մարմինը սույն կարգի 17-րդ կամ 18-րդ կետի համաձայն ստացած հայտը և կից փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է տրամադրում սույն կարգի 6-րդ կետով սահմանված աշխատանքն իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ), եթե ներկայացված հայտը և կից փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին ու պահանջներին:

20. Սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերի համաձայն ներկայացված հայտերը մերժվում են, եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կարգով սահմանված պայմաններին ու պահանջներին:

21. Սույն կարգով սահմանված ներդիրի տրամադրման կամ ներդիրի ստացման մասին հայտը մերժվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:

V. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

22. Լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզավորող մարմին ներկայացնել շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության մասին եռամսյակային հաշվետվություններ՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսան օրվա ընթացքում:

23. Հաշվետվությունը պետք է ներառի հաշվետու ժամանակահատվածում լիցենզավորված անձի կողմից իրականացված շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության մասին տեղեկատվություն, մասնավորապես, շինարարություն իրականացնող կազմակերպության, նրա լիցենզիայի համարի, շինարարություն իրականացնելու վայրի, շինարարության, կառույցի տեսակի, շինարարության իրականացման թույլտվության համարի, շինարարության սկզբի (ամիսը, տարեթիվը), կատարված աշխատանքների ընթացքի և շինարարության ավարտի մասին տեղեկություններ:

24. Լիցենզավորված անձը հաշվետվության մեջ կարող է ներառել նաև տեղեկատվություն և տվյալներ, որոնք անհրաժեշտ են ներկայացվող հաշվետվության համար:

25. Հաշվետվության ձևը և լրացման կարգը հաստատում է լիցենզավորող մարմինը:»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում ներգրավված մասնագետի (մասնագետների) և նրա (նրանց) որակավորման մասին (N 3 ձև).

2) մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները (դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

Հայտին կցվում են՝

1) անձնագրի պատճենը.

2) տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված մասնագետի (մասնագետների) և նրա (նրանց) որակավորման մասին (N 3 ձև).

3) անձի մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները (դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը.

4) անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N3

ՏՎՅԱԼՆԵՐ

_____

(կազմակերպության անվանումը)

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Աշխատողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը	Կրթությունը	Մասնագի-տությունը	Ոլորտը (ոլորտները)
1	2	3	4	5

_____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N4

_____

(կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

_____

(լիցենզավորվող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

ՑԱՆԿ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Կատարման ժամկետը	Վավերացումը (պայմանագրի, ակտի համարները)
1	2	3	4

_____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐԴԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոփոխել շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիային կից տրամադրված N ___ ներդիրը:

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում (անհատ ձեռնարկատիրոջ մոտ) ներգրավված և ներգրավվող մասնագետի (մասնագետների) մասին (N 3 ձև).

2) անձի մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները (դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև):

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(սոցիալական քարտի համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիայի նոր ներդիր՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում (անհատ ձեռնարկատիրոջ մոտ) ներգրավված մասնագետի (մասնագետների) և նրա (նրանց) որակավորման մասին (N 3 ձև).

2) անձի մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները (դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ), ինչպես նաև որակավորված մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև):

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 468-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

_____
(լիցենզիայի և ներդիրի համարները)

_____
(կազմակերպության անվանումը և որակավորված մասնագետի անձնագրի տվյալները)

_____
(գործունեության ոլորտը)

_____
(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2011 թվականի N 510-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 778-Ն ՈՒ N 779-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի ներդիրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 778-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության

գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 779-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. մայիսի 4
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 510-Ն որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա)) ու լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված անձինք քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա ստանալու նպատակով կարող են դիմել ինչպես սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր ոլորտների, այնպես էլ դրանցից մի քանիսի կամ յուրաքանչյուրի համար: Լիցենզիան տրամադրելիս՝ լիցենզիայի ներդիրում կատարվում է նշում հայցվող ոլորտի կամ ոլորտների վերաբերյալ:

3. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման և լիցենզիային կից՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված համապատասխան ոլորտի (ոլորտների) ներդիրի (ներդիրների) տրամադրման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին» ու «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

4. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիան և լիցենզիային կից՝ համապատասխան ոլորտի ներդիրը (ներդիրները) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):

5. Անձը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեությամբ, եթե նա ստացել է քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա և լիցենզիային կից՝ համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

6. Լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

7. Ֆիզիկական անձի մասնագիտական ունակությունների փաստը հաստատվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ մասնագիտության գծով բարձրագույն կրթությամբ կամ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործունեության համապատասխան ոլորտում առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժով:

8. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտներից որևէ մեկում կամ ոլորտներում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտում (ոլորտներում) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

9. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննություն կամ ներգրավվել դրանում:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Հայտատուն լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 1 ձևի, նշելով իրավաբանական անձի անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. տվյալներ կազմակերպությունում ներգրավված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի (բացառությամբ էներգետիկ ոլորտի) մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը), էներգետիկ ոլորտի դեպքում՝ տվյալներ առնվազն երկու տարբեր մասնագետի մասին,

գ. կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

դ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2) ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի, նշելով անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. անձնագրի պատճենը,

գ. տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված որևէ ոլորտում կամ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունները հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը),

դ. անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,

ե. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը:

11. Լիցենզիաներն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային համակարգի
միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Լիցենզավորող մարմինը լիցենզիա տալու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծում է լիցենզավորող հանձնաժողով, որի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է լիցենզավորող մարմինը:

13. Լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիա տալու մասին հայտը քննարկում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

14. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և օրենքով սահմանված կարգով:

15. Լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիա ստանալու մասին հայտը բավարարվելու դեպքում՝ լիցենզավորող մարմինը հայտատուին տրամադրում է քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր (ներդիրներ)՝ լիցենզիայի հայտին կից ներկայացված՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտում (ոլորտներում) աշխատանք (աշխատանքներ) իրականացնող պատասխանատու անձանց մասով: Լիցենզավորված անձն իրավունք ունի գործունեություն իրականացնելու միայն լիցենզիային կից տրամադրված ներդիրում (ներդիրներում) նշված ոլորտում (ոլորտներում):

16. Լիցենզիան վերաձևակերպվում է, և լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԵՐԴԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Մասնագետների փոփոխության դեպքում՝ լիցենզավորված անձը՝ մինչև այդ փոփոխությունների կատարումը լիցենզավորող մարմին է ներկայացնում լիցենզիային կից տրամադրված ներդիրի փոփոխության մասին հայտ՝ համաձայն N 5 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

18. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա ստացած անձինք լիցենզիային կից նախկինում ստացած ներդիրով (ներդիրներով), տվյալ բնագավառում գործունեությունից բացի, սույն կարգի 6-րդ կետով սահմանված այլ ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար լիցենզավորող մարմին են ներկայացնում համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքը (աշխատանքները) իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ) ստանալու մասին հայտ՝ համաձայն N 6 ձևի: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» կամ 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով սահմանված փաստաթղթերը:

19. Լիցենզավորող մարմինը սույն կարգի 17-րդ կամ 18-րդ կետի համաձայն ստացած հայտը և կից փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է տրամադրում սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտում (ոլորտներում) աշխատանք իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ), եթե ներկայացված հայտը և կից փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին ու պահանջներին:

20. Սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերով ներկայացված հայտերը մերժվում են, եթե հայտերին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կարգով սահմանված պայմաններին ու պահանջներին:

21. Սույն կարգով սահմանված լիցենզիայի ներդիրի տրամադրման կամ լիցենզիայի ներդիրի փոփոխության մասին հայտը մերժվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:

22. Լիցենզիային կից տրամադրվող ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Մարգսյան

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում ներգրավված մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին (N 3 ձև).

2) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

Հայտին կցվում են՝

1) անձնագրի պատճենը.

2) տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին (N 3 ձև).

3) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

4) անհատ ձեռնարկատիրոջ կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N3

ՏՎՅԱԼՆԵՐ

_____

(կազմակերպության անվանումը)

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈԼՈՐՏԻ (ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

N՝ p/կ	Աշխատողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը	Կրթությունը	Մասնագի-տությունը	Ոլորտը (ոլորտները)
1	2	3	4	5

_____ _____ _____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N4

_____

(կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

_____

(լիցենզավորվող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

ՑԱՆԿ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

N՝ p/կ	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Կատարման ժամկետը	Վավերացումը (պայմանագրի, ակտի համարները)
1	2	3	4

_____ _____ _____

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐԴԻՐ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոփոխել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության իրականացման լիցենզիային կից տրամադրված N ___ ներդիրը:

Հայտին կցվում են՝

1) տվյալներ կազմակերպությունում (անհատ ձեռնարկատիրոջ մոտ) ներգրավված և ներգրավվող մասնագետի (մասնագետների) մասին (N 3 ձև).

2) անձի կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված մասնագետի (մասնագետների) դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) անձի կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև):

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի նոր ներդիր՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող

պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) տվյալներ անձի կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված մասնագետի (մասնագետների) և ոլորտի (ոլորտների) մասին (N 3 ձև).

2) անձի կողմից իրականացվող գործունեության մեջ ներգրավված մասնագետի (մասնագետների) դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.

3) կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև):

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 510-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

_____
(լիցենզիայի համարը)

Տրված է _____
(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը, իրավաբանական անձի անվանումը,
_____
գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 510-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ
_____
(լիցենզիայի և ներդիրի համարները)
_____
(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)
_____
(գործունեության ոլորտը)
_____
(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2011 թվականի ապրիլի 14-ին

ՔԱՂՎԱԾՔ

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Էներգատեղակայանքների, շենքերի և կառուցվածքների էներգետիկ փորձաքննությունը կամավոր է և իրականացվում է դրանց սեփականատերերի նախաձեռնությամբ ու հաշվին:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ապրանքների ու ծառայությունների գնումների իրականացման նպատակով կազմվող գնման պայմանագրերում անհրաժեշտության դեպքում նշվում է ապրանքների ու ծառայությունների էներգետիկ փորձաքննության եզրակացության ներկայացման պահանջ մատակարար կազմակերպություններից:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Էներգետիկ փորձաքննությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից սերտիֆիկացված համապատասխանության հավաստման հայտատուները:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2011 թ. մայիսի 6
Երևան
ՀՕ-130-Ն

ՀՏԴ 339.142

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԵՐԻ (ՀԱՍՈՒՅԹԻ) ԵՎ ԱՌԱՔՎՈՂ ԿԱՄ ՏՐԱՍԱԴՐՎՈՂ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՌԱՄՔԱՆ) ՄԱՍԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անահիտ Սարգսյան
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան

Բանալի բառեր. հասույթի գրանցման գիրք, առաքման գրանցման գիրք, տնտեսվարող սուբյեկտ, առևտրային գործունեություն, ապրանքներ, հիմնախնդիրներ, հարկային մարմիններ:

ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բազմաթիվ սուբյեկտներ առնչություն են ունենում հասույթի և առաքման գրքերի հետ, որոնք խոչընդոտում են առևտրային գործունեությանը, առաջացնում են բազմաթիվ խնդիրներ, հարկային տուգանքներ, որոնց հիմնախնդիրն ակտուալ է և իսկական գլխացավանք յուրաքանչյուր առևտրային (հատկապես ներմուծում իրականացնող) գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար: Հոդվածում նկարագրվում է գրքերի էությունը, նրանց թերությունները, կատարվել են առաջարկություններ, որոնք ոչ ամբողջությամբ, բայց մասնակիորեն կթեթևացնեն տնտեսվարող սուբյեկտների գործը:

Ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման, առաքման, տեղափոխման, գների փոփոխության գրանցման համար հարկային մարմինները ստեղծել են հասույթի և առաքման գրքերը: Հասույթի և առաքման գիրք չեն վարում ԱԱՀ վճարող չհամարվող այն անձինք, որոնք կիրառում են հսկիչ դրամարկղային մեքենաներ, բանկերը, վարկային կազմակերպությունները:

Կազմակերպությունների հաշվապահական հաշվառման, շարժական գույք հանդիսացող ապրանքների առաքման կամ տեղափոխման դեպքում պարտավոր են վարել դրանց հաշվառումը՝ գրանցումներ կատարել առաքման և (կամ) հասույթի գրքերում:

Առաքումների և (կամ) տեղափոխությունների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում են առանձին առաքման և (կամ) հասույթի գրքեր:

Հասույթի և առաքման գրքերի բոլոր էջերը համարակալվում, կազմվում և կարվում են, ապա ներկայացվում տնտեսվարող սուբյեկտի հաշվառման վայրի հարկային տեսչություն՝ կնքման և հաշվառման համար: Գրանցման գրքերի վրա լրացվում են կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, ՀՎՀՀ-ն, գործունեության հասցեն, իսկ եթե գործունեության հասցեն

տարբերվում է իրավաբանական հասցեից, նաև այն, գրքի հերթական համարը: Առաքման և հասույթի գրքերը պարտադիր կերպով պահվում են գրանցման վայրում:

Գրքերի ավարտման դեպքում տնտեսվարող սուբյեկտը նոր գրանցման գիրք է ներկայացնում հարկային տեսչություն՝ հաստատելու համար:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից առաքումները գրանցվում են ապրանքների և արտադրանքի տեղափոխման կամ առաքման ժամանակ, բացառություն են կազմում միայն պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի նույն հասցեում տեղափոխությունը, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մամուլի տեղափոխումը, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

Հասույթի գրքում ապրանքները ենթակա են գրանցման (հաշվառման) ձեռք բերված (սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները՝ ստանալուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան ապրանքները ստանալու օրվա ավարտը: Հասույթի գրքում գրանցման ենթակա են այն ապրանքները, որոնք նախատեսված են վաճառքի համար:

Օրինակ: «Ծիծեռնակ» ՍՊԸ-ն, ունենալով մի քանի խանութ-սրահներ Կապան քաղաքում, մի սրահից մյուսն է տեղափոխում ապրանքների ցուցադրման համար նախատեսված պահարան: Տվյալ դեպքում պահարանը ենթակա չէ հասույթի գրքում գրանցման, քանի որ այն նախատեսված չէ վաճառքի համար:

Ապրանքների առաքումն իրականացվում է լրացված ապրանքատրանսպորտային բեռնագրի, պահեստի ելքի անդորրագրի, հաշիվ-ապրանքագրի հիման վրա: Ապրանքների առաքման դեպքում առաքումն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի կողմից հերթական համարով գրանցվում է առաքվող ապրանքատեսակի խմբի անվանումը (օրինակ՝ հագուստ, սննդամթերք), հաշիվ ապրանքագրի տվյալները, տեղափոխման ձևը, տեղափոխվող մեքենայի պետհամարանիշը, տեսակը, մակնիշը, ապրանքի տեղափոխումը թույլատրող, տեղափոխող և ստացող անձանց անուն, ազգանունը, անձնագրային տվյալները: Գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը, և անմիջապես հաջորդ տողում կատարվում է ճիշտ գրառում: Յուրաքանչյուր առաքում առաքման գրքում լրացվում է մեկ տողով:

Հասույթի գրքում հերթական համարով լրացվում են յուրաքանչյուր ապրանքի, արտադրանքի մուտքի ամսաթիվը, մուտքի փաստաթղթերի տվյալները, ապրանքի անվանումը, չափման միավորը, քանակը և միավոր ապրանքի գինը: Ապրանքի սխալ գրանցման դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախորդ գրառումը, և անմիջապես հաջորդ տողում կատարվում է ճիշտ գրառումը:

Տնտեսվարող սուբյեկտների վաճառվող ապրանքների գնային փոփոխությունը գրանցվում է

հասույթի գրքում համապատասխան ապրանքի անվանման դիմաց, նշելով փոփոխման ամսաթիվը, քանակը և ապրանքի գինը փոփոխությունից հետո: Հասույթի գրքում ապրանքի գնի երկրորդ փոփոխությունը գրանցվում է առաջինի նման, սակայն երրորդ փոփոխության դեպքում լրացվում է նոր տող՝ հերթական համարով, միաժամանակ փակագծում նշվում է այդ ապրանքի առաջին (նախորդ) գրանցման տողի հերթական համարը, ընդ որում, ամսաթվի սյունակում լրացվում է ապրանքի գնի փոփոխման ամսաթիվը, փոփոխվող քանակը և գինը փոփոխությունից հետո: Շատ կազմակերպություններ ունեն այնպիսի հաճախորդներ, որոնց համար նախատեսում են հատուկ գնային փոփոխություններ: Մեծաքանակ ապրանքից մեկի գնային փոփոխության դեպքում փոփոխվում են վաճառասրահի տվյալ ապրանքի ողջ քանակությունը, մեկը կամ մի քանիսը փոփոխված գնով վաճառելուց հետո մնացորդային քանակությունը նորից գնային փոփոխության միջոցով բերում են հին գնի: Տվյալ գործողությունից կարելի է խուսափել, եթե հաճախորդին տրամադրվի հաշիվ-ապրանքագիր, որի մեջ երևում է վաճառվող ապրանքի անվանումը, քանակը, վաճառքի գինը: Տվյալ դեպքում այլևս անհրաժեշտություն չկա հասույթի գրքում տվյալ ապրանքի համար գնային փոփոխություն անել:

Աշխատանքային օրվա վերջում տնտեսվարող սուբյեկտների կողմից ամեն օրվա արդյունքներով գրանցման գրքերում կատարվում է փաստացի կանխիկ հասույթի գրանցում՝ գրանցման գրքի վերջին վեց էջում «Օրական հասույթների գրանցում» մեկ տարվա համար նախատեսված մասում, ըստ ամսաթվերի: Հասույթների գումարները գրանցվում են հայկական դրամով՝ թվի ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Չաշխատելու դեպքում գրանցման գրքի համապատասխան հատվածում կատարվում է գրառում՝ «հասույթ չի առաջացել»:

Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք կիրառում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ «Օրական հասույթների գրանցում» մասի լրացումը պարտադիր չէ:

Ինչում են կայանում հասույթի գրքի թերությունները:

Հասույթի գիրքը խոչընդոտում է առևտրային գործունեությանը: Օրինակի վրա բացահայտենք թերությունները:

«Թիթեռնիկ» ՍՊԸ-ն զբաղվում է ապրանքների ներմուծմամբ և մանրածախ վաճառքով, ունի ընդամենը մեկ խանութ, չունի պահեստային տարածք: Ներմուծելով Ֆրանսիայից մեծ քանակությամբ հագուստ վաճառքի համար՝ ապրանքը անմիջապես մաքսազերծումից հետո տեղափոխում է առևտրի իրականացման վայր՝ խանութ: Մինչև առևտրի սկսելը այդ քանակությամբ ապրանքը պետք է գրանցվի հասույթի գրքում, մինչև օրվա վերջ: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենաարագաշարժ մարդը, որը պետք է գրի հասույթի գիրքը, կարող է գրել ընդամենը 2,000 տող՝ անուն ապրանք: Ստացվում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտը պետք է սպասի ամենաքիչը հինգ օր, որպեսզի ապրանքը հաշվառվի հասույթի գրքում, ապա սկսի առևտուր իրականացնել:

Կազմակերպությունը պետք է պահի մի առանձին աշխատող հասույթի գիրք լրացնելու համար՝

լրացուցիչ աշխատավարձ, սոց. ապահովագրության ծախս: Սակայն կազմակերպություններ կան, որոնք տվյալ քանակությամբ ապրանք վաճառասրահ բերում են ոչ ամեն օր, այսինքն՝ այն աշխատողը, որը պետք է հասույթի գիրքը լրացնի, աշխատանքային ժամին մնում է անգործ:

Մարդը սխալական է և ինչքան էլ ուշադիր լինի, գրելուց թույլ է տալիս վրիպակներ, թերություններ, սխալներ: Եթե դրենք՝ աշխատողը, գրանցելով ապրանքի անունը, տարբերակիչ կոդը, քանակը կամ գինը, թույլ է տվել սխալներ, օրինակ՝ տարբերակիչ կոդի կոդքին նշել է սխալ ապրանքի անվանումը (կոշիկի փոխարեն վերնաշապիկ), կամ՝ սխալ քանակություն, սխալ գին: Սակայն աշխատողի յուրաքանչյուր սխալի համար պատասխանատվություն է կրում տնտեսվարող սուբյեկտը:

Հարկային մարմինների ստուգում անցկացնելու ընթացքում հայտնաբերվում են թերություններ, սխալներ, որոնց համար տուգանվում է ոչ թե աշխատողը, այլ տնտեսվարող սուբյեկտը: Ստացվում է՝ կազմակերպությունը պատասխանատվություն է կրում ոչ թե օրենքի խախտման, անօրինական գործունեության համար, այլ մարդկային գործոնի, մարդկային սխալականության համար: Իսկ եթե կազմակերպության ղեկավարը աշխատանքային պայմանագրի մեջ նշում է աշխատողի սխալների հետևանքով առաջացող տուգանքների էությունը, հնարավոր չափերը, ոչ մի աշխատող չի համաձայնվում աշխատել նման պայմաններով, կամ էլ պահանջում է աշխատավարձի բավականին «կլորիկ» գումար: Սակայն «ինչ-որ» գիրք լրացնելու համար ղեկավարը պատրաստ չէ վճարել այդ գումարը, կամ դրա փոխարեն տվյալ գումարը նա պատրաստ կլինի ուղղել տնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Առաքման գիրքը, ի տարբերություն հասույթի գրքի, տվյալ թերությունները չունի, մի պարզ պատճառով, որ առաքման գրքում լրացվում է յուրաքանչյուր առաքման համար ընդամենը մեկ տող, որը կարող է պարունակել 10,000 անուն ապրանք: Առաջարկում եմ.

1. հասույթի գիրքը նմանեցնել առաքման գրքին: Այսինքն, հասույթի գիրքը լրացվի առաքման գրքի նման, ընդամենը մեկ տող՝ ապրանքի վաճառասրահ մուտքագրման ամսաթիվը, խմբաքանակի անվանումը, չափման միավորը, ընդանուր քանակությունը և ամբողջ խմբաքանակի վաճառքի գինը: Այստեղ նույնպես հնարավոր է խնդիր լինի՝ կապված չափման միավորի տարբեր լինելու հետ: Տվյալ դեպքում մեկ տողի փոխարեն կարելի է լրացնել
2. Շատ կազմակերպություններ ապրանքի հաշվառումը վարում են հատուկ ծրագրերով: Ապրանքը մուտքագրվում է հատուկ ապարատի միջոցով, որը կարդում է ապրանքի տարբերակիչ կոդը: Վաճառքի համար նախատեսված բոլոր ապրանքները տվյալ սարքի միջոցով անցկացնելուց հետո, կոդերը ըստ քանակների և գների հավաքագրել, հասույթի գրքի տողերին համապատասխան տպել, կնքել կազմակերպության կնիքով (ինչպես նաև գլխավոր հաշվապահի և տնօրենի ստորագրություններով) և պահել կազմակերպությունում:

Յուրաքանչյուր օրվա գրառումները հավաքագրել, կարել՝ ինչպես գիրքը: Սակայն տվյալ դեպքում առաջանում է տպագրված գրքի էջի հնարավոր փոփոխության խնդիր: Շաբաթվա կտրվածքով հարկային մարմիններ ներկայացնել տվյալ թղթերը, որոնք կստուգվեն հարկային մարմինների կողմից և կհաստատվեն:

3. Ներկայումս շատ կազմակերպություններ հաշվետվությունները հարկային մարմիններ հանձնում են էլեկտրոնային եղանակով: Հնարավոր է՝ ստեղծել էլեկտրոնային հասույթի, առաքման գրքի լրացման ֆայլ, որի միջոցով հարկային մարմինները յուրաքանչյուր օր կարող են տեսնել կազմակերպության առաքումները, ճանապարհատրանսպորտային բեռնագրերը, համապատասխան հասույթի գրառումները: Գրառումները կկատարվեն ոչ թե հատ-հատ՝ ապրանքի անվանումը, կոդը, քանակը, գինը լրացնելով, այլ, օրինակ, EXCEL ծրագրի միջոցով բեռնելով ապրանքի կոդը կարդացող սարքի միջոցով ստեղծված ֆայլը: Հարկային մարմիններին ներկայացնելուց հետո, ինչպես հաշվետվությունների ժամանակ, տպել փաստացի ուղարկված ֆայլը, ստացականը, առ այն, որ հարկային մարմինները ստացել են ուղարկվոծ նյութը և կարել հասույթի կամ առաքման գրքին համապատասխան:

Ներկայացված առաջարկություններից յուրաքանչյուրի դեպքում էլ ժամանակային կորուստը մեծ չէ, փոքրանում է մարդկային գործոնի դերը, կազմակերպությունը հանգիստ կարող է 10,000 և ավելի անուն ապրանք բերել վաճառասրահ և չվախենալ, որ չեն հասցնի հաշվառել նման քանակությամբ ապրանքը հասույթի գրքում, ապրանքի մուտքագրման հետ միաժամանակ հնարավոր է իրականացնել առևտուր:

РЕГИСТРАЦИОННАЯ КНИГА РЕКАМЕНДАЦИЙ И УСТРАНЕНИИ НЕДОСТАТКОВ ПРОДУКТА, ПРОДУКЦИИ, ИХ ЦЕН (ДОХОДА), ПОСТАВЛЯЕМЫХ, ПРЕДОСТАВЛЯЕМЫХ ИЛИ ПЕРЕВОЗИМЫХ ГРУЗОВ НА ТЕРЕТОРИИ РА

Анаит Саргсян

Ереванский государственный университет архитектуры и строительства

Ключевые слова: *регистрационная книга доходов и доставок, предприниматель, коммерческая деятельность, продукция, основные вопросы,*